ՀՈԴՎԱԾՆԵՐ ԵՎ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ
СТАТЬИ И СООБЩЕНИЯ

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ս. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հայ գրողների կովկասյան ընկերությունը հիմնվեց 1912 թ. Թիֆլիսում, հայ տպագրության 400-ամյա և գրերի գյուտի 1500-ամյա հոբելյանի նախապատրաստական շրջանում։ Գրեթե ողջ հայ մամուլը, զանազան ընկերություններ՝ այս կամ այն չափով մասնակցելով տոնի նախապատրաստական աշխատանքներին, որոշում են հավերժացնել այն համազգային-մշակութային մեծ արժեք ներկայացնող որևէ ֆոնդի հիմնադրումով։ «Ոստան» եռամսյա պարբերականը գրում է. «Ոստան պիտի փափաքեր որ հայ գրքի ներկա տոնը ըլլա գեղեցիկ առիթ մը բարվոքելու համար հայ հեղինակին նյութական վիճակը, ասով տալու համար իրեն կարելիություններ մտավորապես ալ ավելի արդյունավետ դառնալու»[1]։

Հոբելյանի հետ կապված զանազան հարցերը լուծելու համար էջմիածնում և Թիֆլիսում ստեղծվում են երկու միմյանցից անկախ հանձնաժողովներ, որոնք տարբեր կարծիք ունեին նշանավոր տարեթիվը երբ և ինչպես տոնելու, ինչպիսի ֆոնդով (դպրոցական, գրական և այլն) հավերժացնելու հարցերի շուրջ։ Էջմիածնի հանձնաժողովը որոշել էր տոնել 1912 թ. հոկտեմբերի 13-ին, իսկ Թիֆլիսի հոբելյանական հանձնաժողովը առաջարկում էր տոնել նոյեմբերի 25—26-ին։ Թիֆլիսի հանձնաժողովի բոլոր որոշումներին տոն տվողն ու ղեկավարը Լեոն էր։ Բանավեճի մեջ մտնելով, նա իր «Երկու խոսք Էջմիածնի հոբելյանական հանձնաժողովին» հոդվածում հեղքում է հոկտեմբերի 13-ի ազգանդական կապը գրերի գյուտի հետ։ Հայության մյուս խոշոր կենտրոնում՝ Պոլսում շատ ավելի հաշվի էին առնում Թիֆլիսի հանձնաժողովի որոշումները։ Ապրիլի 29-ին Կ. Պոլսի Ազգային կենտրոնական վարժարանի գահլիճում տեղի ունեցավ հայ տպագրության 400-ամյակին նվիրված հոբելյանական 3-րդ նիստը, որին մասնակցում էին 20 տարբեր միությունների ներկայացուցիչներ։ Նրանք որոշեցին դիմել Կովկաս, Ամերիկա և այլուր նոյեմբերի 25-ին տոնելու առաջարկով։ Եվ ահա Հովհ. Թումանյանը, որը գրական-հասարակական գործունեությամբ դարձավ իր ապրած դարաշրջանի գրական ընթացքի ղեկավարն ու շարժիչ ուժը, այս հարցում նույնպես, ինչպես շատ հաճախ, հանդես է գալիս հաշտարարի դերով։ 1912 թ. սեպտեմբերին նա գրում է «Հետաձգել և միասին տոնել» հոդվածը, ուր ասում էր, որ մի ամսվա ընթացքում (եթե ոչ թե հոկտեմբերին, այլ նոյեմբերին տոնվի) ոչ մի հրաշք չի կարող կատարվել, քանի որ «հիրավի, երբ դեռ ժամանակ կար, կարելի էր քաղաքներն ու հանձնաժողովները հարաբերության մեջ մտնեին, կարծիքներ ու առաջարկություններ փոխանակեին, մի եզրակացության գային, ծրագիր մշակեին, բայց էդ չի արված»։ Մինչդեռ համազգային տոն կատարելու համար անհրաժեշտ էր համախմբվածություն, այդ պատճառով էլ Թումանյանը առաջարկում է. «Միակ ելքն է մի վեց ամսով հետաձգել, լուրջ պատրաստություն տեսնել և

---

1 *«Ոստան», Թիֆլիս, 1912, Բ եռամսյակ, էջ 466—467, 265։*

տոնը կատարել վայելուչ շքեղությամբ ու իմաստուն կերպով, ամեն տեղ միաժամանակ ու միասին»[2]։ Հ. Թումանյանի այս հոդվածը, որ լույս է տեսնում «Հորիզոնի» 1912 թ. № 198-ում, սեպտեմբերի 11-ին անմիջապես իր արձագանքն է գտնում։ Թերթի հենց հաջորդ համարում տպագրվում է «Պետք է համաձայնության գալ» առաջնորդողը, իսկ Մեսրոպ արքեպիսկոպոս Մելյանը սեպտեմբերի 14-ի համարում հանդես է գալիս «Անհրաժեշտ է հետաձգել» հոդվածով, ուր ասում է. «Այսպիսով միացնում եմ իմ ձայնը պ. Հ. Թումանյանի... ձայնին»[3]։ Արձագանքներ եղան նաև Փարիզից։ Ա. Զոպանյանը գրեց իր «Բոպեին պահանջը», ուր նշում էր, որ ծագած վեճը «ամենեն տխուր ու ցավալի բաներեն մեկն է, որ երբեք պատահած ըլլան մեր ազգային կյանքին մեջ... Հովհաննես Թումանյան իր հոյակապ հոդվածով մատնանիշ բրած էր արդեն հույսի փակ նշույլը, որ կա մեր խավարտչին երկնքին մեջ»[4]։

Մյուս հարցը, որի շուրջը նույնպես տարակարծություններ կային, ա.պագրության 400-ամյակը ինչպես, ինչ ֆոնդով հավերժացնելու խնդիրն էր։ Այս հարցը արդեն անմիջականորեն կապվում էր գրողների ընկերության հիմնադրման հետ։ Էջմիածինը առաջարկում էր հիմնել դպրոցական ֆոնդ, իսկ Թիֆլիսի հոբելյանական հանձնաժողովը, Լեոյի նախագահությամբ, որոշում է հիմնել հայ գրողների փոխադարձ օգնության ընկերություն, գրական ֆոնդ։ Ավելի վաղ, 1912 թ. հունվարի 28-ին այդ որոշումը կայացրել էր Կովկասի Հայոց հրատարակչական ընկերությունը հայ տպագրության 400-ամյակին նվիրված հատուկ խորհրդակցությունում։ Լսելով հրատարակչական և գրական ֆոնդերը միացնելու, մրցանակաբաշխության, գրաշարների, հայոց գիտական պատմությունը հրատարակելու և այլ ֆոնդեր հիմնելու առաջարկները, ընկերությունը 57 ձայնից 38-ի մեծամասնությամբ որոշել էր «հիմնել գրական ֆոնդ»[5]։

Այսպես՝ 1912 թ. հունվարից գրվում էր գրական ֆոնդի հիմնադրումով տպագրության 400-ամյակը հավերժացնելու հարցը, երբ դեռ չէր ստեղծվել Թիֆլիսի հոբելյանական հանձնաժողովը, որը հիմնվեց միայն փետրվարի 8-ին։ Այդ հանձնաժողովի անդամներն էին Շիրվանզադեն, Լեոն, Ար. Զարգարյանը, Ե. Լալայանը, Ա. Խատիսյանը, Նար-Դոսը և ուրիշներ։ Իսկ Էջմիածնի հանձնաժողովի անդամներն էին՝ Տոշյանը, Ալթունյանը, Մեսրոպ եպիսկոպոսը և այլք։ Թիֆլիսի հանձնաժողովը «իր առաջին գործերից մեկը դարձրեց հայ գրական գործիչներին օգնող մի ընկերություն հաստատելը»[6]։ Հանձնաժողովը մշակում է այդ ընկերության կանոնադրությունը և մի խումբ հայ գրողների ստորագրությամբ ներկայացնում Թիֆլիսի նահանգական ատյանին հաստատման։ Հուլիսի 10-ին մամուլում հրապարակվում է կառավարության կողմից կանոնադրության հաստատման լուրը. «Այժմ հաստատ աղբյուրից տեղեկանում ենք, որ նահանգական ատյանը արդեն հաստատել է այդ կանոնադրությունը»[7]։ 3ոթ մասից և 39 պարագրաֆից կազմված կանոնադրության մեջ շարադրված էին ընկերության նպատակը, անդամների իրավունքներն ու պարտականությունները և այլն։ Նպատակը ձևակերպվում էր 3 կետերում. ա) իր անդամների նյութական դրության բարվոքումը, բ) նրանց մտավոր, բարոյական և գեղարվեստական զարգացման նպատակը, գ) նյութական փոխադարձ օգնություն։

Այս նպատակները իրագործելու համար ընկերությունը պետք է վարձեր բնակարաններ, իբրև սեփականություն ձեռք բերեր շարժական ու անշարժ գույք, գրական և գեղարվեստական երկերի հեղինակային իրավունք, կազմա-

---

2 Հ. Թումանյան. Երկերի ժողովածու. հ. 4, Երևան, 1951, էջ 207։

3 «Հորիզոն». Թիֆլիս, 1912, № 201։

4 Նույն տեղում, № 211։

5 «Մշակ». Թիֆլիս, 1912, № 21։

6 «Հորիզոն». 1912, № 146։

7 Նույն տեղում։

կերպեր հայ գրողի շահերը շոշափող խնդիրներ արծարծող ժողովներ. հաշտարար միջնորդ դատարաններ՝ փոխադարձ համաձայնությամբ քննելու հրատարակիչների և գրողների միջև ծագած թյուրիմացությունները, ստեղծեր տեղեկատու բյուրո ընկերության գործազուրկ անդամներին աշխատանքով ապահովելու համար։ Կանոնադրության երկրորդ պարագրաֆի 7-րդ կետով նախատեսվում էր հիմնել հատուկ գրական ֆոնդ։ Բացի հայ գրողի նյութականի մասին մտահոգությունից, կանոնադրության մեջ շեշտվում էր նաև հարցի բարոյական կողմը։ Ընկերությունը իր անդամների բարոյական, գեղագիտական զարգացմանը նպաստելու համար պարտավորվում էր ստեղծել մատենագարաններ, ընթերցարաններ, կազմակերպել հասարակական դասախոսություններ, ներկայացումներ, ընթերցումներ։ Կանոնադրության հաստատումն արդեն գրական յայն շրջաններում մեծ ոգևորություն առաջացրեց։ «Հորիզոնի» 1912 թ. հուլիսի 11-ի առաջնորդողը ամբողջությամբ նվիրված էր գրողների ընկերությանը։ Նրանում ասվում էր. «Տասնյակ տարիներով մեզանում արծարծվող այս հարցը այս ձեռնարկությամբ մտնում է գործածության մեջ։ Դրվում է առաջին քարը»[8]։ Իհարկե, մի ընկերություն չէր կարող միանգամից հրաշք գործել, հայ գրական իրականությունը ամբողջապես վերափոխել, բայց գա կլիներ մի քայլ «գոնե ամենախիստ կերպով շեշտելու հայ գրականությունը իրան վայել դրության մեջ դնելու անհրաժեշտությունը»[9]։

Ընկերության գործունեությանը կարող էին մասնակցել ոչ միայն Թիֆլիսի, այլև աշխարհի տարբեր մասերում ապրող հայ գրողները։ Նաև այդ պատճառով իշխանության կողմից ընկերության հիմնագրման թույլտվությունն ու կանոնադրության հաստատման լուրը «բուռն հրճվանքով»[10] ընդունվեց Ռուսաստանի ամենատարբեր մասերում։ Ալ. Ծատուրյանը Ժելեզնովոդսկից գրեց. «Վերջապես... սրտիս խորքից բացականչեցի ես· Այժմ հայ գրողներն էլ հանդես կգան իբրև հավաքական մի մարմին, իբրև նյութապես և բարոյապես կազմակերպված մի զորեղ ուժ, այժմ նրանք էլ կունենան իրենց ինքնուրույն, անկախ կյանքը, կունենան փոքր ի շատե մի հաստատուն հող իրենց ոտքի տակ։ ...Հայ գրողների միության գաղափարը հրաշալի է և սրտանց ողջունելի»[11]։

Գրողների ընկերության հիմնադրումը ուղեկցվում էր գրական և դպրոցական ֆոնդերի ստեղծման համար մղվող սուր պայքարով։ Լեոն վճռականապես դեմ էր դպրոցական ֆոնդին, քանի որ, նրա կարծիքով, եթե «այդ երկու ծրագիրները միաժամանակ հրապարակ նետվեն կամ եթե ազատություն տանք բոլոր մարմիններին ու խմբակցություններին իրենց ցանկացած ֆոնդերի ծրագիրը մեջտեղ քաշելու, ...պետք է ուզենք, թե չուզենք, իրար հետ մրցեն և իրար ջլատեն»[12]։ Լեոն պնդում էր, որ համազգային ֆոնդը պետք է հավերժացվի մեկ համազգային գործով։ 1912 թ. հուլիսի 16-ին հայ տպագրության 400-ամյակի առիթով կարդացած իր դասախոսության մեջ Շիրվանզադեն, ընդգծելով գրողների միավորման անհրաժեշտությունը, դառնությամբ ասում է. «...Հայ միտքը օտարանում է, նոր սերունդն այլասերվում, ...դպրոցներով մենք նոր սերնդի լոկ ախորժակն ենք բանում և ապա մատնում նրան հավիտենական քաղցի...», գրական ֆոնդը «էականն ու կենսականն է ներկայիս»[13]։

Ի պաշտպանություն գրական ֆոնդի, ընկերության հիմնադրման այս նախապատրաստական շրջանում դրվում էր հայ գրողի համար գրականությունը մասնագիտություն դարձնելու հարցը։ Թարգմանիչ Արշալույս Տեր-Հովհաննիսյանը գրում է «Գրականությունը որպես պրոֆեսիա» հոդվածը, ուր ասվում է. «...Ուզեմն հայ վիպագրից, բանաստեղծից պահանջել ան, ինչ

8 Նույն տեղում, № 147։
9 Նույն տեղում։
10 Նույն տեղում, № 199։
11 Նույն տեղում։
12 Նույն տեղում։
13 «Մշակ». 1912, № 158։

արտադրում են ռուսական, լեհական, նորվեգիական և այլն գրողների բեղմնավոր գրիչները, անկարելի է և անհույս...

Ի՞նչ անել։

...Գրականությունը դարձնել պոռֆեսիա, որի համար պիտի ապահովել մի որոշ ընկերությամբ...»[14]։

Գրական ֆոնդի անհրաժեշտությունը այնքան ակնհայտ էր, որ նույնիսկ Էջմիածնի հանձնաժողովի ոչ բոլոր անդամներն էին, որ դեմ էին դուրս գալիս բացահայտորեն։ Գ. Էդիլյանը իր «Ազգային մեծ ուժեր» հոդվածում առաջարկում է. «...թող իրենց գլուխը բարձրացնեն երկու մեծ ընդհանուր ազգային ֆոնդեր «դպրոցականը» և «գրականը»[15]։ 1912 թ. սեպտեմբերի 19-ին «Հորիզոնում» տպագրվում է Հայ գրողների կովկասյան ընկերություն ստեղծելու և նրան անդամագրվելու հայտարարությունը, ուր ասվում էր. «Կովկասի Հայ գրագետների ընկերության կանոնադրությունը պատշաճավոր իշխանությունից հաստատված լինելով՝ ընկերության հիմնադիրները հրավիրում են հայ գրողներին, գիտնականներին և լրագրողներին անդամագրվել ընկերության»[16]։ Այս հայտարարությունից պարզ էր դառնում, որ ընկերության անդամ կարող են լինել ոչ միայն գրողները, այլև գրականագետ-քննադատները, լրագրողները, գիտության և գրականության բոլոր մշակները։ «Հորիզոնի» հաջորդ՝ սեպտեմբերի 20-ի առաջնորդողը ամբողջությամբ նվիրված էր գրողների ընկերությանը։ «Առաջին անգամն է մեզանում,— նշվում էր այնտեղ,— որ հայ մտքի մշակները համախմբվում են միասնաբար պաշտպանելու իրենց շահերն ու միջոցներ ձեռք առնելու իրենց նյութական ու բարոյական կացությունը բարվոքելու»։ Հոդվածագիրը հայ մտավորականներին կոչ էր անում կանգուն պահել «մի համեստ, բայց մտերիմ ու հարազատ օջախ, որի շուրջը բոլորել են Եղիշեներ և Եղնիկներ, Նարեկացիներ ու Շնորհալիներ, Աբովյաններ ու Ադայաններ»։ Թերթը, սրտանց ողջունելով Գրողների ընկերության ստեղծումը, նրա գործունեության մեջ տեսնում էր «մի պորեղ ազգակ հայ գրականության շքեղ զարգացման»[17]։ Սակայն սեպտեմբերի 29-ին, ժողովի մասնակիցները, այդ թվում Լեոն, Տ. Հովհաննիսյանը, Հ. Աղաբաբը և մյուս ժողովականները թեև միաձայն հավանություն տվեցին ընկերության հիմնադրման գաղափարին, սակայն ընկերության բացումը «թողնվեց հետագային». նախաձեռնարկ անդամներին հանձնարարվեց որքան հնարավոր է շուտ այդ նպատակով ժողով գումարել, որը և տեղի ունեցավ հոկտեմբերի 3-ին։ Առաջին անգամ այս ժողովում ընտրվեցին ընկերության անդամներ՝ թվով 8 հոգի՝ Հովհաննես Թումանյան, Արշակ Հարությունյան, Նար-Դոս, Ատրպետ, Փիլիպոս Վարդաղարյան, Գրիգոր Վարգանյան, Ստեփան Լիսիցյան, Հակոբ Գենջյան։ Ընկերությունը հոկտեմբերի 3-ից արդեն հիմնադրված էր և որոշումներ էր կայացնում ու արձանագրում, բայց այն պետք է դիտել իբրև սոսկ նախապատրաստական մի բան. քանի որ չընտրվեց վարչության դեկավար կազմ, ինչպես նաև ժողովականների կողմից դեռ չէր հաստատվել ընկերության կանոնադրությունը։

Ընկերության հիմնադիր ժողովը տեղի ունեցավ հոկտեմբերի 10-ին Թիֆլիսի քաղաքային դումայի դահլիճում։ Նախագահում էր Հովհ. Թումանյանը, իսկ քարտուղարն էր Մկրտիչ Վանեցյանը, որոնք ընտրվեցին գաղտնի քվեարկությամբ։ Մասնակիցների ընդհանուր թիվը 35 էր։ Իր բացման խոսքում Ա. Բրիստակես Զարգարյանը տվեց ընկերությունը կազմելու համառոտ բացատրությունը՝ ընդգծելով Թիֆլիսի հոբելյանական հանձնաժողովի դերը վաղուց

---

14 Նույն տեղում, № 38։

15 «Հորիզոն». 1912, № 159։

16 Նույն տեղում, № 204։

17 Նույն տեղում, № 205։

ցանկալի այդ ընկերության բացման գործում[18]։ Դաղտնի քվեարկությամբ անդամ են ընտրվում 17-ը՝ այդ թվում՝ Հովհաննես Մալխասյանը, Հակոբ Ալիխանյանը, Լևոն Մանվելյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Աթաբեկ Խնկոյանը, Հակոբ Հակոբյանը, Միքայել Մանվելյանը, Վրթանես Փափազյանը և այլն։ Ընտրվում է նաև վարչության կազմը՝ բաղկացած 8 հոգուց՝ Հովհաննես Թումանյան, Լևո, Արիստակես Զարգարյան, Տիգրան Հովհաննիսյան, Աշոտ Աթանասյան, Գյուտ Աղանյան, Արշակ Հարությունյան, Երվանդ Լալայան, 9 փոխանդամ և վերստուգիչ մասնաժողով։ Ի դեպ, ժողովականները վարչության կազմի ընտրությանը մեծ կարևորություն էին տալիս և նախօրոք որոշել էին այդ հարցին «մոտենալ լրջորեն»[19]։ Վարչության անդամության թեկնածության համար առաջարկվել էին նաև Նար-Դոսը, ժողովից բացակայող Շիրվանզադեն։ Միաձայն ընտրվում է միայն Հովհաննես Թումանյանը։ Նորընտիր վարչությունը հանձնարարում է հաջորդ ժողովը գումարել մի ամսից ոչ ուշ։

1912 թ. հոկտեմբերի 16-ին ընկերության վարչության անդրանիկ նիստը դատնի քվեարկությամբ Հովհաննես Թումանյանին ընտրեց նախագահ, որն այդ պաշտոնում անփոխարինելի մնաց մինչև ընկերության փակվելը։ Տ. Հովհաննիսյանը ընտրվում է փոխնախագահ, իսկ Ար. Զարգարյանը՝ դանձապահ։ Որոշվում է վարչության նիստեր գումարել ամեն կիրակի երեկոյան ժամը 6-ից 8-ը։

Այսպես ստեղծվեց Հայ գրողների կովկասյան ընկերությունը։ Հոկտեմբերի 24-ին և 25-ին մամուլի տարբեր օրգաններում հրապարակվեց Հովհ. Թումանյանի կոչը, որը լայն արձագանք գտավ և համազգային մեծ ոգևորություն առաջացրեց։ Կոչում ասվում էր. «Վերջապես իրականություն է դառնում մեր գրական-հասարակական գործիչների վաղեմի իղձը՝ համախմբված աչքալեն հայ մտքի ու գրչի մշակներին։ Այսպիսով հայ գրողն ունի մի այնպիսի հիմնարկություն, որին նա կարող է ապավինել կարիքի ժամանակ և մի ժամադրավայր, ուր հայ գրականության հարցերն ու խնդիրները կարող են պաշտպանվել ու հանգել բանավոր լուծման»[20]։ Ընդ որում, Թումանյանը նորաբաց ընկերության շուրջը համախմբվելու էր կոչում ոչ միայն գրողներին, այլև «գրականության և հրապարակախոսության ասպարեզում գործողներին» միահամուռ ուժերով նվիրվելու ազգային գրականության բարգավաճման։

Բարեմաղթանքի, ողջույնի նամակներ ու հեռագրեր ստացվեցին երկրի տարբեր մասերից։ Բաքվից, Հին Նախիջևանից, Վլադիկավկազից, Արդահանից, Զաքաթալայից, Յալտայից, Պետերբուրգից ընկերությանը անդամագրվելու դիմում հայտնեցին Համազասպ Առաքելյանը, Հակովբ Սարիկյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Հովհաննես Կոստանյանը և շատ ուրիշներ։ Ալ. Ծատուրյանի՝ Հովհ. Թումանյանին ուղղված նամակում կարդում ենք. «Անհուն ուրախություն եմ հայտնում, որ հայ գրչի մշակների միության բարձր գաղափարն այսօր արդեն մարմնացած, իրական հողի վրա է դրված։ Սրտագին ող-

---

18 Տ. Հովհաննիսյանը իր ելույթում նշեց, որ Ս. Շահազիզը և Պ. Պողոսյանը առաջինն են Թիֆլիսում գրողների ընկերության միտքը արծարծել, իսկ Աթանասյանի առաջարկությամբ ժողովականները հոտնկայս հարգում են «հիշատակը այն մարգկանց, որոնք իրենց հասարակական գործունեության ընթացքում միշտ աշխատել են հայ գրողների ընկերության գաղափարը իրականացնելու համար։ Դրանք են՝ Սմբատ Շահազիզ, Պետ. Պողոսյան և Ղազարոս Աղայան» (ԳԱՐ, Հայ գրողների կովկասյան ընկերության ֆոնդ, № 181։ Տե՛ս նաև «Պատմա-բանասիրական հանդես». 1966, № 4, էջ 193—196)։ Մ. Ջմշկյանը առաջարկում է ի նշանավորումն ընկերության հիմնադրության բոլոր գրողների մասնակցությամբ հրատարակել մի ժողովածու, որից գոյացած արդյունքը հատկացնել աղքատ գրականագետների և գրողների ընտանիքներին, ձեռնարկել նրանց երկերի հրատարակությունը, թարգմանաց օրը դարձնել ընկերության տոնը, ժողովի կողմից շնորհավորական հեռագիր ուղարկել էջմիածին՝ տառերի գյուտի և տպագրության հոբելյանների ամիսվ։ Այդ առաջարկները օրակարգից դուրս են համարվում։

19 ԳԱՐ, Հայ գրողների կովկասյան ընկերության ֆոնդ, № 181։

20 Հովհ. Թումանյան. Երկերի ժողովածու. հ. VI, Երևան, 1959, էջ 411։

ցույններ և բարեմաղթություններ անդրանիկ Հայ գրողների ընկերության, որի ծնունդն այնքան ջերմ փափագել ու երազել է ամեն մեկը մեզանից՝ իր չարքաշ կյանքի սև ու մութ օրերում...»[21]։

Նոյեմբերի 12-ին Բաքվի Մարդասիրական ընկերության շենքում հայ գրողների ժողովը ողջունում է Թիֆլիսի Հայ գրողների կովկասյան ընկերությունը, համոզված լինելով, որ այն կդառնա «մի դպրոց, որ կբարձրացնե հայ գրողի գրական արժեքը, նրա մտքի մակերևույթը, վերջապես նրան կոգևորե և ասպարեզ կբաշե գրելու»[22]։ Ձայների մեծամասնությամբ այդ ժողովը որոշում է իբրև մասնաճյուղ մտնել ընկերության կազմի մեջ։

Հովհ. Թումանյանը Մոսկվայից, Պետերբուրգից, Բաքվից, Գյուլադարակից, Դազվինից և այլ վայրերից ստանում է բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ, որոնցում ընկերության երևան գալը համարվում է ուրախալի երևույթ, «սրբազան օջախ», «ազգային կուլտուրայի վերակենդանացում»[23] և այլն։ Վահան Տերյանը 1914 թ. հունվարի 12-ին Հովհ. Թումանյանին հասցեագրած իր նամակում գրում է. «Կարդացի հարգո վարչության գրությունը, որով հայտնում եք, որ Հայ գրողների ընկերության ընդհանուր ժողովը պատիվ է արել ինձ ընկերության անդամ ընտրելու։ Թույլ տվեք հանձինս, հայտնելու համակրելի ընկերության հարգելի անդամներին իմ ամենախորը ու ջերմ շնորհակալությունը։ Կուզեի հավատացնել Ձեզ, որ իմ ուժերի ներածին չափ պիտի ջանամ անօգուտ ու անպետք անդամ չլինելու ընկերության, որի առաջադիմության ու աջողության նպաստելը ամեն դրասեր հայի պարտքը պետք է համարել»[24]։ Իսկ Ցոլակ Խանդադյանը, հավատալով, որ Թումանյանի «ձեռնարկած գործը մի խոշոր երևույթ պիտի դառնա մեր կուլտուրական կյանքում», ընկերության նախագահին ուղղած իր նամակում համեստորեն հարցնում է. «Ես Հայ գրողների ընկերության անդամ չեմ և չգիտեմ, որքան հարմար կլինի, եթե առաջարկեմ թվեարկեք ինձ, կարո՞ղ եմ համարվել գրող, ասի՞մ»[25]։

Սակայն առաջին իսկ քայլերից ընկերությունը հանդիպեց որոշակի դժվարությունների։ «Մշակ», «Баку», «Каспий» թերթերը ընկերության հիմնադիրներին մեղադրում էին հենց սկզբից կուսակցական ոգով շարժվելու մեջ։ «Каспий» թերթը գտնում էր, որ ընկերության առաջացրած ոգևորությունը և հաջողությունը սոսկ մակերևութական է և միայն թղթի վրա գոյություն ունեցող, որ այն անխուսափելիորեն կկործանվի և կգազարի իր նպատակին ծառայելուց. «...չար ու դաժան մի եզրակացություն և այն էլ հայոց առաջին գրական ընկերության հենց առաջին քայլերի հանդեպ»[26],— գրում է Հովհ. Թումանյանը և համոզված հայտարարում. «Ո՛չ, չպետք է կործանվի հայոց Գրական ընկերությունը։ Քանի որ մի երկրում, մի հասարակության մեջ էդ տեսակ մարդիկ կան՝ էդ տեսակ մամուլ ու էդ տեսակ վերաբերմունք կա դեպի գրողն ու գրականությունը—նա ընդհակառակը, պետք է հաստատուն կանգնի, մեծանա, ուժեղանա, հարազատ ու տաք օջախ դառնա հայոց հալածական գրականության, ամուր նեցուկ ու պաշտպան դառնա հայոց խանգարված գրողի համար և բարձր պատվար ամեն չարության ու հալածանքի հանդեպ»[27]։ Հովհ. Թումանյանը իր «Կովկասի հայոց գրական ընկերությունն ու իր քննադատները» հոդվածում բողոքում է Հակոբ Գենջյանի, Սեդրակ Թառայանի, «Մշակի» հարձակումների, անհիմն մեղադրանքների դեմ[28]։ Ի պատասխան այդ հոդվածի «Մշակը» գրեց. «Ոչ ոք դեմ չէ Հայ գրողների ընկերության. Ձեզ միայն այն եմ ասում, թե՝

21 «Հորիզոն». 1914, № 251։

22 Նույն տեղում, № 256։

23 ԴԱԹ, Թումանյանի ֆոնդ. № 99/22։

24 Նույն տեղում, № 120 (տ. ցուց.)։

25 Նույն տեղում, № 19։

26 Հովհ. Թումանյան. Երկերի ժողովածու. հ. 4, էջ 220։

27 Նույն տեղում։

28 «Մշակ». 1912, № 225։

«Մշակը», թե՛ Շիրվանզադեն և թե՛ «Каспий» ռուս թերթը, մենք հեռու կմընանք այնքան ժամանակ, մինչև որ ձեր ընկերությունը տրամադրություն ցույց կտա ընդունել և ընտրել գրական և ոչ պատահական դիլետանտներին»[29]։

«Баку» լրագրի Թիֆլիսի թղթակից Հ. Գենջյանը (Կարա Դարվիշ), նկարագրելով նորակազմ ընկերության առաջին ընդհանուր ժողովը, խեղաթյուրում էր փաստերը, գրելով, թե ժողովականները չեն կամեցել քվեարկել և վարչության կազմում տեղ տալ «իսկական գրող» Շիրվանզադեին։

Սակայն ինքը՝ Շիրվանզադեն, մի կարճ նամակով հերքում է Գենջյանի անհիմն մեղադրանքները։ Նա գրում է. «Ես ինքս չեմ կամեցել քվեարկվել և նույնիսկ ներկա չեմ եղել այդ ժողովին»[30]։

Շիրվանզադեն գտնում էր, որ նորաստեղծ միավորումը պետք է լիներ զուտ գրողների, միայն գրականությամբ զբաղվողների ընկերություն, անտեսելով այն փաստը, որ հայ իրականության մեջ դժվար է գտնել որևէ գրող, որը ստիպված չլինի իր ապրուստը այլ մասնագիտությամբ ձեռք բերելու. «...ինչ վերաբերում է այն բանին, որ ես չեմ ուզում անմիջական մասնակցություն ունենալ ընկերության գործում, այս այսպես կլինի մինչև այն օրը. երբ նա վերջապես կդառնա զուտ գրողների ընկերություն,— գրում է Շիրվանզադեն։— Առայժմ նա դժբախտաբար այդպես չէ։ Գոնե նրա նորընտիր վարչության կազմը ինձ համար անհասկանալի մի խառնուրդ է։ Եթե բնական է, որ բժիշկների ընկերության ղեկը բժիշկների ձեռքում լինի, հապա ինչո՞ւ չպիտի գրողների ընկերության ղեկը լինի գրողների ձեռքում։ Չգիտեմ, գուցե ես մոլորվա՞ծ եմ, բայց ինձ թվում է, որ յուրաքանչյուր արվեստագետ իր արվեստի համար պետք է լինի խստապահանջ, նույնիսկ բծախնդիր ոչ միայն ներքին բովանդակության, այլև արտաքինի, այլև ձևի վերաբերմամբ...»[31]։

Օգտվելով Շիրվանզադեի այս դժգոհությունից, «Մշակը» հայտարարում էր. «Ընկերության անդամների ճնշող մեծամասնությունը այնպիսի անձնավորություններ են, որոնք գրականությանն ու լրագրությանը օտար են»[32]։ Նրանց պատասխանում է դարձյալ Հովհ. Թումանյանը. «Հայ գրողը եթե ուզում է գրականության մեջ զգույշ լինի ու խստապահանջ. թող էդպես լինի իր գրչի ու գրականության վերաբերմամբ»[33]։

Շիրվանզադեի առաջարկը, որքան էլ արդարացի հիմքեր ունենար, այնուամենայնիվ գործնական տեսակետից հայ իրականության համար անիրագործելի էր և սխալ։ Մինչև «զուտ» գրողների ընկերություն ստեղծելը անհրաժեշտ էր ունենալ նախ «զուտ գրողներ», իսկ դրա համար պետք էր ստեղծել այնպիսի միավորում, որը հնարավորություն տար հայ գրողին չշեղվելու, գրականությունը մասնագիտություն դարձնելու և միայն նրանով զբաղվելու։ Բանավիճելով Շիրվանզադեի հետ, Ա. Ղազարյանը գրում է. «Սակայն մի պայման, որ պ. Շիրվանզադեն դիտմամբ թե մոռացությամբ անտես է արել, որ նախքան զուտ գրողների ընկերությունը պարտավոր է մատնացույց անել այն հեղինակավոր մարմնի գոյությունը, որն իր վրա վերցներ իսկական գրողին ոչ գրողից զատելու ծանր պատասխանատու դերը։ Եթե շատերին անծանոթ են այն պայմանները, ուր սնվում ու զարգանում են հայ գրողները, լինեն նրանք հին, թե նոր, անվանի, թե սկսնակ, համենայնդեպս պ. Շիրվանզադեն չէ այդ մեկը, որին անհայտ է հայ իրականությունը»[34]։

Ինչպես նշվեց վերը, դարասկզբին հայ գրական-հասարակական կյանքում մեծ սրությամբ էր գրվել գրականությունը գրողի համար մասնագիտություն դարձնելու, «հայ գրողին» «զուտ գրող» դարձնելու հարցը։ Հայ գրողը գրականությանը նվիրվելու ժամանակ և հնարավորություն չուներ։ Ինչպես վկայում է

29 Նույն տեղում։

30 «Հորիզոն». 1912, № 251։

31 Նույն տեղում։

32 «Մշակ». 1912, № 248։

33 Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 4, էջ 219։

34 «Հորիզոն». 1912, № 251։

Վահան Բոթովենցը, Թումանյանը սիրում էր կրկնել՝ «Բանը եվրոպացի գրող լինելը չէ, այլ հայ գրող լինելն է»[35]։ Եվ նորաստեղծ ընկերության կոնկրետ նպատակներից մեկն էլ գրողի և ընթերցողի միջև անմիջական կապի ստեղծումն էր, գրականությունը գրողի համար մասնագիտություն դարձնելը։ Դեռ տարիներ առաջ Վրթանես Պապազյանը, անդրադառնալով հայ գրողի «խանդարվածության» հարցին, գրում էր. «Հ. Պարոնյանի պես մեծ երգիծաբանը կարող էր ցրիչությամբ կամ նպարավաճառությամբ զբաղվել... Ցավեցիք և ի՞նչ արիք, երբ Պռոշյանը վեց ամիս ածխավաճառություն էր անում ապրելու համար, երբ Շիրվանզադեն պարտքերի տակ իրվեց՝ իր երկերի հրատարակության առթիվ, երբ Մուրացանը հաշվապահության դիմեց ապրելու համար և երբ Լեոն աչքերը փչացրեց գրոցին ոչ պատշաճ աշխատությունների վրա..., երբ Նար-Դոսը լրագրական հոդվածներ էր շինում և Երիցյանի թերթի սև աշխատանքով զբաղվում»[36]։

Իհարկե, Շիրվանզադեն շատ լավ գիտեր, թե որքան անհրաժեշտ է հասարակության նյութական ու բարոյական աջակցությունը գրողին և իրոք, չէր կարող դեմ լինել և չողջունել այդ նպատակին ծառայող ընկերությանը։

«Մշակի» խմբագիրները նույնպես պնդում էին, թե իրենք չեն մասնակցի գրական ընկերությանը այն պատճառով, որ նրա մեջ ընտրվել և ընդունվում են ոչ գրական մարդիկ։ Բայց, ինչպես նկատում է Թումանյանը, «չէ՞ որ թե՛ «Մշակի» խմբագրությունը, թե՛ Շիրվանզադեն չէին եկել հենց ընկերության բացումին, հենց առաջին ընդհանուր ժողովին։ Չէ՞ որ էն ժամանակ դեռ հայտնի էլ չէր, թե ինչ մարդիկ են ընտրվելու...»[37]։

Ընկերության նախաձեռնողներին «Մշակի» ներկայացրած մեղադրանքներից մեկն էլ այն էր, որ նրանք անդամագրելիս ընտրել են ոչ թե «իսկական գրողներին հրավիրելու, այլ քվեարկության եղանակը». «Նրանք փոխանակ հրավիրելու իսկական գրողներին անդամ ընտրելու ինքնաբերաբար, դիմեցին քվեարկության եղանակի, որպեսզի կարողանան իրանք, իբրև հիմնադիր քվեարկողներ, ընտրել կամ չընտրել սրան-նրան, ում իրանք հարկավոր կհամարեն»[38]։ Այսպես «Մշակը» շարունակում էր իր անբարյացակամ վերաբերմունքը, ի պատասխան որի նոյեմբերի 13-ին «Հորիզոնում» տպագրվում է մի «փոքրիկ ֆելիետոն» Մէ-Բիս ստորագրությամբ[39]։

Ընկերության դեմ «Ընկեր» թերթի ելույթները հատկապես զռեհիկ բնույթ էին կրում։ Անստորագիր «Դարձյալ մի անպետք հիմնարկություն» հաղորդման մեջ խիստ հոռետեսորեն է գնահատվում ընկերության հիմնադրման փաստը. «Մեր բուրժուա գործիչները սարքեցին դարձյալ մի հիմնարկություն... Նույն աստեղներն են և այստեղ, և այնտեղ, նույն Թումանյան, նույն Լեո, նույն բժիշկ Զարգարյան։ ...Կան գրողներ, որոնք 40 տեսակ եկամուտ են ստանում, և այժմ էլ ընկերություն են հիմնում, որպեսզի ավելի ևս «օրինական» կերպով քթեն հարուստներին...»[40]։

Այսպիսի հարձակումը տեղին չէր և որևէ պատասխան չստացավ։ Բայց այս վեճը վերջին անգամ խոսք ու գրույցի առարկա դարձավ ընկերության մեջ 1912 թ. նոյեմբերի 25-ի ժողովում, ուր Թումանյանը ժողովը սկսեց այն բանից, որ բացատրեց կանոնադրության առաջին կետը, թե ովքեր կարող են լինել Հայ գրողների կովկասյան ընկերության անդամ. «Մանավանդ այդ հարցը այժմ մամուլի մեջ վեճի առարկա է դարձել։ Մեր կանոնադրության առաջին կետի հիման վրա ընկերության անդամ կարող են լինել նրանք, որոնք հայոց մեջ աշխատում են գրականության, գիտության և մամուլի ասպարեզներում։

---

35 Թումանյանը ժամանակակիցների հուշերում. Երևան, 1969, էջ 141։

36 Վրթ. Փ ա փ ա զ յ ա ն. Գրականության մասին. Երևան, 1962, էջ 47։

37 Հ ո վ հ. Թ ո ւ մ ա ն յ ա ն. Երկերի ժողովածու. հ. 4, էջ 218։

38 «Մշակ». 1912, № 248։

39 «Հորիզոն». 1912, № 253։

40 «Ընկեր». Թիֆլիս, 1912, № 32։

Այսպիսով, պարզվում է, որ ընկերությունը ընտրյալների մի կաճառ չէ, հայկական ակադեմիա չէ, այլ մի հաստատություն, որի հարկի տակ կարող են ժողովվել խոշոր ու սաղանդավոր մարդկանցից սկսած մինչև ամենահամեստ աշխատավորն այդ ասպարեզում՝ փոխադարձ օգնության և բարոյական-գեղարվեստական զարգացման նպատակով ճիշտ այնպես, ինչպես ռուսական գրական ընկերության մեջ. ուր Տոլստոյի, Տուրգենևի, Չեխովի և մյուս մեծերի հետ միասին գրված են շատ համեստ անուններ։ Եթե մենք իրոք ենք լինելու և իսկական, ես կցանկանայի, որ այդ լիներ ընկերության բարոյականի վերաբերյամբ և աշխատենք նրա բարոյական պատկերը բանել մաքուր, բառձր ամեն նեղ կուսակցական միտումներից»[41]։

Ահա այսպիսի պայմաններում, որոշակի դժվարություններ հաղթահարելով ստեղծվեց Հայ գրողների Կովկասյան ընկերությունը։ Իր առաջադրած նպատակներով և դրանց իրագործման կարևորությամբ ընկերությունը միայն նոր ստեղծումով մեծ աշխուժություն առաջացրեց։ Բացվեց նոր խոսք ու զրույց գրականության, նրա արժեքի, դերի շուրջ։ Գրվեցին հոդվածներ, որոնցում գրականությունը դիտվում էր իբրև այն միակ ասպարեզը, ուր յուրաքանչյուր ազգ ներկայանում է իր ուրույն հոգեբանությամբ, իր ազգային յուրահատկություններով. «Գրականությունը դա հենց ինքը ազգն է իր պատմական ու հոգեբանական տրագիցիաներով»[42]։ Այս տողերի հեղինակը Խաչենցին է, գրել ընկերության ստեղծումից յոթ օր հետո Պետերբուրգից։ Այսպիսի տողերի արդի է հանդիպել ընկերությանը հղված բազմաթիվ հեռագրերում և նամակներում։ Խաչենցու պես շատերը սկսում են մտահոգվել գրականության ապագայի, տեղի ու դերի հարցերով, իհարկե, նախ նրա ներկայով, նրա վիճակի իսկական ընորոշման խնդրով[43]։

Ակնհայտ էր, որ նորաբաց ընկերությունը պիտի զբաղվեր գրական կյանքի ոչ միայն պրակտիկ խնդիրներով։ Նրա առջև ծառանում էին գրականության ատմությանը, անցյալին, ներկային և ապագա ճակատագրին վերաբերող դեթե բոլոր խնդիրները, դրանց գիտական ընորոշման, գրական քաղաքականությանը և քննադատությանը վերաբերող զանազան հարցեր։

Թիֆլիսի Հայ գրողների Կովկասյան ընկերությունը իր հիմնադրման առաջին օրերից դարձավ 1910-ական թթ. գրական պրոցեսի կարևոր օղակներից մեկը։

ИЗ ИСТОРИИ ОСНОВАНИЯ КАВКАЗСКОГО ОБЩЕСТВА АРМЯНСКИХ ПИСАТЕЛЕЙ

С. Г. ОГАННИСЯН

Резюме

Кавказское общество армянских писателей было основано в октябре 1912 г. в Тифлисе в период подготовки к празднованию 400-летия армянского книгопечатания и 500-летия создания армянского алфавита. Организация общества сопровождалась борьбой за создание литературного фонда. Создание общества вызвало большое движение в армянских литературных кругах. Огромна роль председателя общества Туманяна в борьбе за его основание. С первых же дней создания общество стало одним из важнейших очагов армянской литературной и культурной жизни.

---

41 ԴԱԹ, Հայ գրողների կովկասյան ընկերության ֆոնդ, № 181։

42 «Հորիզոն». 1912, № 235։

43 Նույն տեղում։